Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆԻ՝ ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Սարգիս Հայոցյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Ղազախստանի Հանրապետություն, ք. Աստանա, հունիսի 3-ից 7-ը, 2024 թվական

4. Հրավիրող կողմը

Միջազգային գիտատեխնիկական կենտրոն (ՄԳՏԿ)

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի կառավարիչների խորհրդի 78-րդ հանդիպմանը և ՄԳՏԿ 30-րդ հոբելյանական միջոցառմանը

6. Քննարկված թեմաները

1. ՄԳՏԿ 2024 թվականի ռազմավարական միջոցառումների ճանապարհային քարտեզը, նպատակները, խնդիրները և ժամանակացույցը,
2. ՄԳՏԿ 30-րդ հոբելյանական միջոցառման ծրագիրը,
3. ՄԳՏԿ կառավարիչների խորհրդի 77-րդ նիստի արձանագրության ներկայացում,
4. ՄԳՏԿ ճյուղային կառույցների 2023 թվականի հաշվետվությունները,
5. ՄԳՏԿ 2023 թվականի գործունեության արդյունքները, բյուջեն, ՄԳՏԿ քարտուղարության գործունեության հաշվետվությունը,
6. ՄԳՏԿ կողմից իրականացվող նախաձեռնությունները, ծրագրերը և նախագծերը,
7. Նոր պետությունների (Ուզբեկստան, Քենիա, Միացյալ Թագավորություն, Սինգապուր, Արաբական Միացյալ Էմիրություններ, Շվեյցարիա) ՄԳՏԿ անդամակցության գործընթացի մասին զեկուցում,
8. Այլ ընթացիկ հարցեր:

7. *Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը*

Սարգիս Հայոցյանը մասնակցել է Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի կառավարիչների խորհրդի 78-րդ հանդիպմանը և ՄԳՏԿ 30-րդ հոբելյանական միջոցառմանը: Հանդիպումների ընթացքում քննարկվել են ՄԳՏԿ 2023 թվականի գործունեության արդյունքները, ՄԳՏԿ քարտուղարության գործունեության հաշվետվությունը, ՄԳՏԿ 2024 թվականի ռազմավարական միջոցառումների ճանապարհային քարտեզը, նպատակներն ու գործառնական խնդիրները, ՄԳՏԿ շրջանակում նոր երկրների անդամակցության և համագործակցությունների ձևավորումը, ՄԳՏԿ հաղորդակցության ռազմավարական պլանը, ինչպես նաև ապատեղեկատվության տարածման դեմ իրականացվող համապատասխան միջոցառումները: ՄԳՏԿ 30-րդ հոբելյանական միջոցառման շրջանակում կայացել է «Գիտությունը հանուն առավել անվտանգ աշխարհի» խորագրով գիտաժողովը: Պանելային քննարկումների ընթացքում անդրադարձ է կատարվել արդիական խնդիրներին, ինչպիսիք են կլիմայի փոփոխությունը և ջրի անվտանգությունը, կիբեռանվտանգությունը, բժշկական պատրաստվածությունը արտակարգ իրավիճակներում, ինչպես նաև քիմիական, կենսաբանական, ճառագայթային և միջուկային սպառնալիքները մեղմելու համար նոր տեխնոլոգիաների կողմից ստեղծված մարտահրավերները:

Քննարկվել են ՄԳՏԿ 2024-2030 թվականների ռազմավարության տեսլականը և ճանապարհային քարտեզը, ինչպես նաև ՄԳՏԿ մասնակցությունը «ԷՔՍՊՈ 2025 Օսակա, Կանսայ, Ճապոնիա» ցուցահանդեսին:

Սարգիս Հայոցյանն օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ ներկայացրել է առաջարկություններ և հանդես է եկել դիտարկումներով:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Քննարկված հարցերի արդյունքում ձևավորվել է ՄՏԳԿ կառավարիչների խորհրդի 79-րդ նիստի և աշխատանքային խմբի օրակարգի նախագիծն ու ժամանակացույցը: Հաստատվել է ՄՏԳԿ քարտուղարության գործադիր տնօրենի պաշտոնում նշանակումը և ՄՏԳԿ կառավարիչների խորհրդի կողմից հավանության է արժանացել ՄԳՏԿ մամուլի հաղորդագրության հրապարակումը:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Մասնակիցները կշարունակեն աշխատանքները ՄԳՏԿ ընձեռած հնարավորությունների շրջանակներում, ինչպես աշխատանքային խբերի, այնպես էլ կառավարիչների խորհրդի կազմերում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Սարգիս Հայոցյան

11.06.2024թ.